ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Թողարկողի ֆիրմային անվանումը՝ *«ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ*

Կազմակերպական-իրավական ձևը՝ *սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն*

Գտնվելու վայրը, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն)՝ *ՀՀ, ք. Երևան, Աէրացիա 1; հեռախոս՝ (+37410) 467410, 467989, 467990; ֆաքս՝ (+37410) 467400; ինտերնետային կայքը՝ www.valletta.am; էլ-փոստ՝ valletta@valletta.am*

Հաշվետվության համարն ու ամսաթիվը՝ *N12, 09.10.2008թ.*

Տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ *անվանական արժեկտրոնային պարտատոմս*

Արժեթղթերի քանակը՝ *առաջին թողարկում՝ 7,000 (յոթ հազար) հատ*

երկրորդ թողարկում՝ 10,000 (տասը հազար) հատ

Տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ *անվանական արժեկտրոնային մասնակի մարումներով պարտատոմս*

Արժեթղթերի քանակը՝ *երրորդ թողարկում՝ 10,000 (տասը հազար) հատ*

Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ *50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ*

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը»:

ստորագրող անձինք՝

Հենրիկ Զախարյանց	Տնօրենների խորհրդի նախագահ		09.10.2008
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Շահեն Ստեփանյան	Տնօրենների խորհրդի անդամ, տնօրեն		09.10.2008
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հովիկ Զախարյանց	Տնօրենների խորհրդի անդամ, փոխտնօրեն		09.10.2008
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Աննա Գևորգյան	Տնօրենների խորհրդի անդամ, Ֆինանսական տնօրեն		09.10.2008
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արթուր Մարտիրոսյան	Տնօրենների խորհրդի անդամ, Գլխավոր հաշվապահ		09.10.2008
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում եմ՝

Շահեն Ստեփանյան	Տնօրենների խորհրդի անդամ, տնօրեն		09.10.2008
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

09 հոկտեմբերի 2008թ.

Կ.Տ.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
«ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ կանոնադրության փոփոխության, կառավարման մարմինների փոփոխության և կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ

«ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ /այսուհետ՝ Ընկերություն/ միակ մասնակցի 29.09.2008թ. որոշման համաձայն Ընկերությունում ձևավորվել է կառավարման նոր մարմին՝ տնօրենների խորհուրդ, որի արդյունքում Ընկերության կանոնադրությունում կատարվել է համապատասխան փոփոխություն:

Ընկերության կանոնադրության փոփոխության համաձայն՝

1. Ընկերության կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը, Ընկերության խորհուրդը և Ընկերության գործադիր մարմինը՝ տնօրենը
2. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովներում քվեարկությունների ժամանակ Ընկերության մասնակիցներն ունեն Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համապատասխան ձայների քանակ:

3. Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել մասնակիցների տարեկան ընդհանուր ժողով:
4. Ընկերության մասնակիցների տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 ամիս հետո՝ 4 ամսվա ընթացքում:
5. Ընկերության մասնակիցների տարեկան ընդհանուր ժողովից բացի գումարվող այլ ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:
6. Ընկերության արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Ընկերության տնօրենների խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Ընկերության տնօրենի, վերստուգող հանձնաժողովի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10% բաժնեմասի սեփականատեր հանդիսացող մասնակցի (մասնակիցների) պահանջով:
7. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում
    - 7.1 Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.
    - 7.2 Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.
    - 7.3 Ընկերության կողմից բաժնեմասի (բաժնեմասերի) ձեռքբերումը և դրանց իրացումը օրենքով սահմանված դեպքերում.
    - 7.4 Ընկերության վերակազմակերպումը.
    - 7.5 Ընկերության լուծարումը.
    - 7.6 Ընկերության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռների հաստատումը.
    - 7.7 Ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.
    - 7.8 Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.
    - 7.9 Կազմակերպությունների (այդ թվում՝ դուստր և կախյալ ընկերությունների) հիմնադրումը.
    - 7.10 Այլ կազմակերպություններին (այդ թվում՝ դուստր և կախյալ ընկերություններում) մասնակցության մասին որոշման ընդունումը.
    - 7.11 Ընկերության տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև ընկերության գործադիր մարմնի լիազորություններն կառավարչին (առևտրային կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) տալու հարցերը.
    - 7.12 Ընկերության խորհրդի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
    - 7.13 Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
    - 7.14 Աուդիտի իրականացման որոշումն ընդունելը.
    - 7.15 Ընկերության տարեկան հաշվետվությունների, տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատումը.
    - 7.16 Ընկերության շահույթն ու վնասները ընկերության մասնակիցների միջև բաշխման մասին որոշման ընդունումը.
    - 7.17 Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը.
    - 7.18 Ընկերության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշումն ընդունելը.
    - 7.19 Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքները (գործարքի արժեքը գերազանցում է զուտ ակտիվների մեծության 50%-ը) կատարելու մասին որոշման ընդունումը.
    - 7.20 Ընկերության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը.
    - 7.21 Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն իրավունք ունի քննարկել և որոշումներ ընդունել նաև օրենքով և սույն կանոնադրությամբ ընդհանուր ժողովի իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջ:

8. 7-րդ կետի բոլոր ենթակետերով սահմանված հարցերը հանդիսանում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցեր և չեն կարող փոխանցվել Ընկերության տնօրենների խորհրդին կամ գործադիր մարմնին:

9. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն իրավազոր է (քվորում ունի), եթե դրան մասնակցում են Ընկերության մասնակիցների ձայների ընդհանուր թվի կեսից ավելին տնօրինող մասնակիցները: Սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում (երբ քննարկվող հարցը պահանջում է բոլոր մասնակիցների միաձայնությունը) ժողովը իրավասու է բոլոր մասնակիցների (նրանց ներկայացուցիչների) ներկայության դեպքում:

10. 7-րդ կետի 7.2, 7.4, 7.5, 7.7 և 7.8 ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն են ժողովին մասնակցողների ձայների երեք քառորդով, սակայն ոչ պակաս Ընկերության բոլոր մասնակիցների ձայների երկու երրորդից, իսկ մնացած հարցերի շուրջ՝ Ընկերության բոլոր մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

11. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերող հարցերը լուծվում են ժողովի ընթացքում՝ օրակարգի հարցերի քննարկման, քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման նպատակով մասնակիցների համատեղ ներկա գտնվելով, կամ հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով: Հեռակա կարգով քվեարկության (հարցման) դեպքում որոշման նախագիծը ուղարկվում է մասնակիցներին, որոնք պետք է գրավոր հայտնեն իրենց կարծիքը: Նման քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կամ փոխանցնող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը և դրանց փաստաթղթային հաստատումն ապահովող կապի այլ միջոցներով փոխանակելու միջոցով:

12. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովների որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ:

13. Մեկ մասնակից ունեցող ընկերությունում Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասության հարցերի կապակցությամբ որոշումները ընդունվում են մասնակցի կողմից միանձնյա և ձևակերպվում են գրավոր:

14. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն (առանց ձայնի իրավունքի) տնօրենների խորհրդի ընկերության մասնակից չհանդիսացող անդամները, տնօրենը, վերստուգիչ հանձնաժողովի անդամները կամ վերստուգողը, աուդիտն իրականացնող անձը:

15. Ընկերության յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի պահանջելու հարցերի քննարկում Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում, այն պայմանով, որ այն ներկայացված լինի նիստը սկսվելուց առնվազն 10 օր առաջ:

16. Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Ընկերության տնօրենների խորհուրդը:

Ընկերության տնօրենների խորհրդի անդամները ընտրվում են Ընկերության մասնակիցների տարեկան ժողովի կամ տնօրենների խորհրդի անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի կողմից: Տնօրենների խորհրդի անդամների լիազորությունները դադարում են միայն տնօրենների խորհրդի հաջորդ կազմի ընտրվելու պահից:

Ընկերության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովը կարող է որոշում ընդունել տնօրենների խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

Տնօրենների խորհրդի քանակական կազմը սահմանվում է մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ, բայց չի կարող երեք անդամից պակաս լինել:

Տնօրենների խորհրդի անդամ կարող է լինել նաև Ընկերության բաժնետեր չհանդիսացող ցանկացած գործունակ ֆիզիկական անձ:

17. Ընկերության տնօրենների խորհրդի նիստը իրավազոր է, եթե դրան մասնակցում են տնօրենների խորհրդի անդամների կեսից ավելին:

18. Ընկերության տնօրենների խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝

18.1 Առաջարկությունների ներկայացումը Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասության բոլոր հարցերով.

18.2 Ընկերության մասնակիցների տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը և նախապատրաստումը.

18.3 Ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման և/կամ ծախսերի փոխհատուցումների կարգի ու պայմանների որոշումը.

18.4 Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը և նրա վարձատրության չափի որոշումը.

18.5 Վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.

18.6 Ընկերության պահուստային կապիտալի օգտագործումը.

18.7 Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին.

18.8 Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված գործարքները (գործարքի արժեքը կազմում է զուտ ակտիվների մեծության 20%-50%-ը) կատարելու մասին որոշման ընդունումը,

18.9 Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

18.10 Հաստիքացուցակի հաստատումը.

18.11 Օրենքով և սույն կանոնադրությամբ Ընկերության տնօրենների խորհրդի իրավասությանը վերապահված այլ հարցերի լուծումը:

Ընկերության տնօրենների խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ տնօրենների խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն, ընդ որում ձայների հավասարության դեպքում տնօրենների խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:

Տնօրենների խորհրդի անդամներն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով Ընկերության շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և Ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները կատարեն բարեխիղճ ու ողջամիտ կերպով:

19. Ընկերության տնօրենների խորհրդի նախագահի և տնօրենի պաշտոնները կարող են համատեղվել Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ:

20. Ընկերության տնօրենների խորհրդի նիստերը գումարում է տնօրենների խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ՝ խորհրդի անդամի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության տնօրենի, Ընկերության առնվազն տաս տոկոս բաժնեմասի սեփականատիրոջ պահանջով: Տնօրենների խորհրդի նիստ գումարելու մասին պահանջ ներկայացնող անձինք պարտավոր են պահանջը ներկայացնել գրավոր, որտեղ պետք է ձևակերպված լինեն այն հարցերը, որոնք առաջարկվում են ընդգրկվել տնօրենների խորհրդի նիստի օրակարգում:

21. Ընկերության տնօրենների խորհրդի նախագահն (նախագահի հարգելի պատճառներով բացակայության դեպքում տնօրենների խորհրդի նախագահի փոխարինողը կամ տարիքով ավագ խորհրդի անդամը) ստանալով վերը նշված անձանց պահանջը՝ տնօրենների խորհրդի նիստ գումարելու մասին, պարտավոր է յոթ օրվա ընթացքում գումարել Ընկերության տնօրենների խորհրդի նիստ՝ պահանջը ներկայացրած անձի (անձանց) առաջարկած օրակարգով: Արտահերթ ընդհանուր ժողով գումարելու վերաբերյալ պահանջ ներկայացվելու դեպքում տնօրենների խորհրդի կողմից որոշում ընդունելու առավելագույն ժամկետը սահմանվում է Օրենքով: Եթե Ընկերության տնօրենների խորհրդի նախագահը (նախագահի հարգելի պատճառներով բացակայության դեպքում տնօրենների խորհրդի նախագահի փոխարինողը կամ տարիքով ավագ խորհրդի անդամը) յոթ օրվա ընթացքում տնօրենների խորհրդի նիստ չի գումարում, ապա տնօրենների խորհրդի նիստ կարող է գումարել պահանջը ներկայացրած անձինք: Ընդ որում չի թույլատրվում տնօրենների խորհրդի նիստի օրակարգում ընդգրկել հարցեր, որոնք չեն ընդգրկվեն տնօրենների խորհրդի նախագահին հղված՝ խորհրդի նիստ գումարելու մասին պահանջագրում:

22. Ընկերության տնօրենների խորհրդի նախագահը՝

ա) Կազմակերպում է Ընկերության տնօրենների խորհրդի աշխատանքները.

բ) Գումարում է Ընկերության տնօրենների խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.

գ) Կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.

դ) Նախագահում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովներում:

23. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը իրականացնում է տնօրենը, որն ընտրվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից երեք տարի ժամկետով: Ընկերության և Ընկերության տնօրենի միջև պայմանագիրը ստորագրվում է խորհրդի նախագահի կամ ընդհանուր ժողովի կողմից լիազորված անձի կողմից (եթե տվյալ ընդհանուր ժողովում նախագահել է տնօրենը):

Տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի և տնօրենների խորհրդի բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերից:

Ընկերության տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող Ընկերության: Նա պարտավոր է Ընկերության կամ Ընկերության մասնակիցների պահանջով հատուցել իր կողմից Ընկերությանը պատճառած վնասները: Ընկերությանը պատճառած վնասների հատուցման հայցով դատարան դիմելու իրավունք ունի Ընկերությունը կամ նրա մասնակիցը:

24. Ընկերության տնօրենը իր իրավասության սահմաններում

- առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից,
- տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական ռեսուրսները,
- կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
- տալիս է լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
- բանկային հիմնարկներում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ,
- իրականացնում է Օենքով, Ընկերության կանոնադրությամբ իրեն վերապահված կամ Ընկերության ընդհանուր ժողովի կողմից տրված այլ լիազորություններ և հանձնարարություններ:

25. Ընկերությունն իրավասու է իր գործադիր մարմնի իրավասությունները փոխանցել կառավարչին (առևտրային կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր):

Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 26.12.2006թ.-ին որոշում է ընդունվել վերստուգիչ հանձնաժողով/վերստուգիչ չընտրելու վերաբերյալ՝ հիմք ընդունելով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 35 հոդված 6 կետի և 49 հոդվածի 5 կետի դրույթները:

Ընկերության միակ մասնակցի 29.09.2008թ. որոշման համաձայն Ընկերության տնօրենների խորհրդի անդամներ են ընտրվել Հենրիկ Զախարյանցը, Հովիկ Զախարյանցը, Շահեն Ստեփանյանը, Աննա Գևորգյանը և Արթուր Մարտիրոսյանը: Ընկերության տնօրենների խորհրդի 30.09.2008թ. որոշման համաձայն Հենրիկ Զախարյանցը ընտրվել է Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ:

Ընկերության կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև՝

N	*Անունը, Ազգանունը և պաշտոնը*	*Բնակության վայրը*	*Մասնագիտությունը*	*Վերջին 3 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոնները*
1	*Հենրիկ Զախարյանց* ***Տնօրենների խորհրդի նախագահ***	***ՀՀ, ք. Բյուրեղավան, 16 շ., բն. 9***	***ինժեներ-ռադիոտեխնիկ***	***2003թ.-2006թ. նոյեմբեր՝ տնօրեն («ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ) 2006թ.-2008թ. ապրիլ՝ տնօրեն («ՆԱՏՖՈՒԴ» ՓԲԸ) 2008թ. հուլիսից առ այսօր՝ տնօրեն («ՆԱՏՖՈՒԴ» ՓԲԸ) 2006թ. առ այսօր՝ տնօրեն («ՍԹԱՐ ԳԼՈՈՒ» ՓԲԸ)***
2	*Շահեն Ստեփանյան* ***Տնօրենների խորհրդի անդամ, Տնօրեն***	***ՀՀ, Արարատի մարզ, գյուղ Նոյակերտ***	***ինժեներ***	***1996թ.-2006թ. նոյեմբեր՝ փոխտնօրեն («ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ) 2006թ. նոյեմբերից առ այսօր՝ տնօրեն («ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ)***
3	*Հովիկ Զախարյանց* ***Տնօրենների խորհրդի անդամ, Փոխտնօրեն***	***ՀՀ, ք. Բյուրեղավան, 16 շ., բն. 9***	***ինժեներ-ռադիոէլեկտրոնշիկ***	***1995թ.-2008թ. հուլիս՝ մենեջեր («ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ) 2008թ. հուլիսից առ այսօր՝ փոխտնօրեն («ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ)***
4	*Աննա Գևորգյան* ***Տնօրենների խորհրդի անդամ, Ֆինանսական տնօրեն***	***ՀՀ, ք. Երևան, Անտառային 49***	***ինժեներ-տնտեսագետ***	***2004-2005թթ.՝ աուդիտոր (KPMG, Մոսկվա) 2005- 2006թթ.՝ ավագ փորձագետ ("Deloitte & Touche", Մոսկվա) 2007թ. մարտ - առ այսօր՝ ֆինանսական տնօրեն («ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ)***
5	*Արթուր Մարտիրոսյան* ***Տնօրենների խորհրդի անդամ, Գլխավոր հաշվապահ***	***ՀՀ, ք. Աբովյան, Մարալանջ 7, բն. 12***	***ռադիոֆիզիկ, տնտեսագետ***	***2004-2005թթ.՝ գլխավոր հաշվապահ («ՀԵՆԿ» ՀԿ) 2005-2008 թթ. հուլիս՝ ավագ աուդիտոր («Գրանթ Թորնթոն Ամիո» ՍՊԸ) 2008թ. հուլիս - առ այսօր՝ գլխավոր հաշվապահ («ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ)***
6	*Արա Ստեփանյան* ***ԼՂՀ մասնաճյուղի տնօրեն***	***ՀՀ, ք. Երևան, Աղոնցի 17/2-47***	***ինժեներ-շինարար***	***2004թ. ապրիլ - առ այսօր՝ մասնաճյուղի տնօրեն («ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ ԼՂՀ մասնաճյուղ)***

Ստորև ներկայացվում է Ընկերության կառավարման մարմինների և ֆունկցիոնալ ստորաբաժանումների նոր սխեմատիկ կառուցվածքը.



Կազմված է 29.09.2008թ.-ին և բաղկացած է 5 թերթից
Տպագրված է ընդամենը 5 օրինակ
ՕՐԻՆԱԿ 4

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«ՎԱԼԼԵՏՏԱ»
սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության միակ մասնակցի 29.09.2008թ.
կայացված թիվ 14 որոշմամբ

«ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ մասնակից՝

_____ Հ. Զախարյանց

"__" _____ 2008թ.

«ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ տնօրեն՝

_____ Շ. Ստեփանյան

"29" 09 _____ 2008թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿԱՊԱՆԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ
ԳՐԱՆՑՄԱՆ ՕՐ՝ 12.12.2003թ.

ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ՝ 27.110.01163

ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ՝ 03 Ա 062367

22.11.2007թ. գրանցված կանոնադրության
թիվ 001.3 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
Կապանի տարածքային բաժնի
կողմից "06" հոկտեմբեր 2008թ.

Կապանի Տ/Բ պետ՝

_____ Կ. Հովհաննիսյան

«ՎԱԼԼԵՏՏԱ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

1. Ընկերության կանոնադրության 7-րդ գլուխը փոփոխել և կարդալ հետևյալ բովանդակությամբ.

«7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

7.1. Ընկերության կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը, Ընկերության խորհուրդը և Ընկերության գործադիր մարմինը՝ տնօրենը

7.2. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովներում քվեարկությունների ժամանակ Ընկերության մասնակիցներն ունեն Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համապատասխան ձայների քանակ:

7.3. Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել մասնակիցների տարեկան ընդհանուր ժողով:
7.4. Ընկերության մասնակիցների տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 ամիս հետո՝ 4 ամսվա ընթացքում:
7.5. Ընկերության մասնակիցների տարեկան ընդհանուր ժողովից բացի գումարվող այլ ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:
7.6. Ընկերության արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Ընկերության տնօրենների խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Ընկերության տնօրենի, վերստուգող հանձնաժողովի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10% բաժնեմասի սեփականատեր հանդիսացող մասնակցի (մասնակիցների) պահանջով:
7.7. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում
1. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.
2. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.
3. Ընկերության կողմից բաժնեմասի (բաժնեմասերի) ձեռքբերումը և դրանց իրացումը օրենքով սահմանված դեպքերում.
4. Ընկերության վերակազմակերպումը.
5. Ընկերության լուծարումը.
6. Ընկերության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռների հաստատումը.
7. Ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.
8. Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.
9. Կազմակերպությունների (այդ թվում՝ դուստր և կախյալ ընկերությունների) հիմնադրումը.
10. Այլ կազմակերպություններին (այդ թվում՝ դուստր և կախյալ ընկերություններում) մասնակցության մասին որոշման ընդունումը.
11. Ընկերության տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև ընկերության գործադիր մարմնի լիազորություններն կառավարչին (առևտրային կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) տալու հարցերը.
12. Ընկերության խորհրդի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
13. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
14. Աուդիտի իրականացման որոշումն ընդունելը.
15. Ընկերության տարեկան հաշվետվությունների, տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատումը.
16. Ընկերության շահույթն ու վնասները ընկերության մասնակիցների միջև բաշխման մասին որոշման ընդունումը.
17. Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը.
18. Ընկերության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշումն ընդունելը.
19. Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքները (գործարքի արժեքը գերազանցում է զուտ ակտիվների մեծության 50%-ը) կատարելու մասին որոշման ընդունումը.
20. Ընկերության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը.
21. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն իրավունք ունի քննարկել և որոշումներ ընդունել նաև օրենքով և սույն կանոնադրությամբ ընդհանուր ժողովի իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջ:
7.8. Սույն կանոնադրության 7.4. կետի բոլոր ենթակետերով սահմանված հարցերը հանդիսանում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցեր և չեն կարող փոխանցվել Ընկերության տնօրենների խորհրդին կամ գործադիր մարմնին:
7.9. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն իրավազոր է (քվորում ունի), եթե դրան մասնակցում են Ընկերության մասնակիցների ձայների ընդհանուր թվի կեսից ավելիին տնօրինող մասնակիցները: Սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում (երբ քննարկվող հարցը պահանջում է բոլոր մասնակիցների միաձայնությունը) ժողովը իրավասու է բոլոր մասնակիցների (նրանց ներկայացուցիչների) ներկայության դեպքում:

7.10. Սույն կանոնադրության 7.4. կետի 2, 4, 5, 7 և 8 ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն են ժողովին մասնակցողների ձայների երեք քառորդով, սակայն ոչ պակաս Ընկերության բոլոր մասնակիցների ձայների երկու երրորդից, իսկ մնացած հարցերի շուրջ՝ Ընկերության բոլոր մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

7.11. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերող հարցերը լուծվում են ժողովի ընթացքում՝ օրակարգի հարցերի քննարկման, քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման նպատակով մասնակիցների համատեղ ներկա գտնվելով, կամ հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով: Հեռակա կարգով քվեարկության (հարցման) դեպքում որոշման նախագիծը ուղարկվում է մասնակիցներին, որոնք պետք է գրավոր հայտնեն իրենց կարծիքը: Նման քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կամ փոխանցնող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը և դրանց փաստաթղթային հաստատումն ապահովող կապի այլ միջոցներով փոխանակելու միջոցով:

7.12. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովների որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ:

7.13. Մեկ մասնակից ունեցող ընկերությունում Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասության հարցերի կապակցությամբ որոշումները ընդունվում են մասնակցի կողմից միանձնյա և ձևակերպվում են գրավոր:

7.14. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն (առանց ձայնի իրավունքի) տնօրենների խորհրդի ընկերության մասնակից չհանդիսացող անդամները, տնօրենը, վերստուգիչ հանձնաժողովի անդամները կամ վերստուգողը, աուդիտն իրականացնող անձը:

7.15. Ընկերության յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի պահանջելու հարցերի քննարկում Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում, այն պայմանով, որ այն ներկայացված լինի նիստը սկսվելուց առնվազն 10 օր առաջ:

7.16. Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Ընկերության տնօրենների խորհուրդը:

Ընկերության տնօրենների խորհրդի անդամները ընտրվում են Ընկերության մասնակիցների տարեկան ժողովի կամ տնօրենների խորհրդի անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի կողմից: Տնօրենների խորհրդի անդամների լիազորությունները դադարում են միայն տնօրենների խորհրդի հաջորդ կազմի ընտրվելու պահից:

Ընկերության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովը կարող է որոշում ընդունել տնօրենների խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

Տնօրենների խորհրդի քանակական կազմը սահմանվում է մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ, բայց չի կարող երեք անդամից պակաս լինել:

Տնօրենների խորհրդի անդամ կարող է լինել նաև Ընկերության բաժնետեր չհանդիսացող ցանկացած գործունակ ֆիզիկական անձ:

7.17. Ընկերության տնօրենների խորհրդի նիստը իրավազոր է, եթե դրան մասնակցում են տնօրենների խորհրդի անդամների կեսից ավելին:

7.18. Ընկերության տնօրենների խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝

1) Առաջարկությունների ներկայացումը Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասության բոլոր հարցերով.
2) Ընկերության մասնակիցների տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը և նախապատրաստումը.
3) Ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման և/կամ ծախսերի փոխհատուցումների կարգի ու պայմանների որոշումը.
4) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը և նրա վարձատրության չափի որոշումը.
5) Վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.
6) Ընկերության պահուստային կապիտալի օգտագործումը.
7) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին.
8) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված գործարքները (գործարքի արժեքը կազմում է զուտ ակտիվների մեծության 20%-50%-ը) կատարելու մասին որոշման ընդունումը,
9) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.
10) Հաստիքացուցակի հաստատումը.

11) Օրենքով և սույն կանոնադրությամբ Ընկերության տնօրենների խորհրդի իրավասությանը վերապահված այլ հարցերի լուծումը:

Ընկերության տնօրենների խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ տնօրենների խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն, ընդ որում ձայների հավասարության դեպքում տնօրենների խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:

Տնօրենների խորհրդի անդամներն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով Ընկերության շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և Ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները կատարեն բարեխիղճ ու ողջամիտ կերպով:

7.19. Ընկերության տնօրենների խորհրդի նախագահի և տնօրենի պաշտոնները կարող են համատեղվել Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ:

7.20. Ընկերության տնօրենների խորհրդի նիստերը գումարում է տնօրենների խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ՝ խորհրդի անդամի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության տնօրենի, Ընկերության առնվազն տաս տոկոս բաժնեմասի սեփականատիրոջ պահանջով: Տնօրենների խորհրդի նիստ գումարելու մասին պահանջ ներկայացնող անձինք պարտավոր են պահանջը ներկայացնել գրավոր, որտեղ պետք է ձևակերպված լինեն այն հարցերը, որոնք առաջարկվում են ընդգրկվել տնօրենների խորհրդի նիստի օրակարգում:

7.21. Ընկերության տնօրենների խորհրդի նախագահն (նախագահի հարգելի պատճառներով բացակայության դեպքում տնօրենների խորհրդի նախագահի փոխարինողը կամ տարիքով ավագ խորհրդի անդամը) ստանալով վերը նշված անձանց պահանջը՝ տնօրենների խորհրդի նիստ գումարելու մասին, պարտավոր է յոթ օրվա ընթացքում գումարել Ընկերության տնօրենների խորհրդի նիստ՝ պահանջը ներկայացրած անձի (անձանց) առաջարկած օրակարգով: Արտահերթ ընդհանուր ժողով գումարելու վերաբերյալ պահանջ ներկայացվելու դեպքում տնօրենների խորհրդի կողմից որոշում ընդունելու առավելագույն ժամկետը սահմանվում է Օրենքով: Եթե Ընկերության տնօրենների խորհրդի նախագահը (նախագահի հարգելի պատճառներով բացակայության դեպքում տնօրենների խորհրդի նախագահի փոխարինողը կամ տարիքով ավագ խորհրդի անդամը) յոթ օրվա ընթացքում տնօրենների խորհրդի նիստ չի գումարում, ապա տնօրենների խորհրդի նիստ կարող է գումարել պահանջը ներկայացրած անձինք: Ընդ որում չի թույլատրվում տնօրենների խորհրդի նիստի օրակարգում ընդգրկել հարցեր, որոնք չեն ընդգրկվեն տնօրենների խորհրդի նախագահին հղված՝ խորհրդի նիստ գումարելու մասին պահանջագրում:

7.22. Ընկերության տնօրենների խորհրդի նախագահը՝

ա) Կազմակերպում է Ընկերության տնօրենների խորհրդի աշխատանքները.

բ) Գումարում է Ընկերության տնօրենների խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.

գ) Կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.

դ) Նախագահում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովներում:

7.23. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը իրականացնում է տնօրենը, որն ընտրվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից երեք տարի ժամկետով: Ընկերության և Ընկերության տնօրենի միջև պայմանագիրը ստորագրվում է խորհրդի նախագահի կամ ընդհանուր ժողովի կողմից լիազորված անձի կողմից (եթե տվյալ ընդհանուր ժողովում նախագահել է տնօրենը):

Տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի և տնօրենների խորհրդի բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերից:

Ընկերության տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող Ընկերության: Նա պարտավոր է Ընկերության կամ Ընկերության մասնակիցների պահանջով հատուցել իր կողմից Ընկերությանը պատճառած վնասները: Ընկերությանը պատճառած վնասների հատուցման հայցով դատարան դիմելու իրավունք ունի Ընկերությունը կամ նրա մասնակիցը:

7.24. Ընկերության տնօրենը իր իրավասության սահմաններում

- առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից,
- տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական ռեսուրսները,
- կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
- տալիս է լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
- բանկային հիմնարկներում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ,
- իրականացնում է Օենքով, Ընկերության կանոնադրությամբ իրեն վերապահված կամ Ընկերության ընդհանուր ժողովի կողմից տրված այլ լիազորություններ և հանձնարարություններ:

7.25. Ընկերությունն իրավասու է իր գործադիր մարմնի իրավասությունները փոխանցել կառավարչին (առևտրային կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր):

7.26. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից՝ 3 տարի ժամկետով: Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամների թվաքանակը սահմանվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից:

Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության մասնակիցներից յուրաքանչյուրի պահանջով:

Տնօրենը կամ խորհրդի անդամը չի կարող լինել վերստուգող կամ վերստուգիչ հանձնաժողովի անդամ: Վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) իրավունք ունի Ընկերության պաշտոնատար անձանցից պահանջելու իրեն ներկայացնել բոլոր անհրաժեշտ նյութերը, անձնական բացատրությունները՝ գրավոր կամ բանավոր ձևով:

Ընկերության ֆինանսական և տնտեսական գործունեության ստուգումն իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան: Ընկերությունը պարտավոր է ֆինանսատնտեսական գործունեության ստուգում կատարել ոչ ուշ, քան տարին մեկ անգամ:

Վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) ստուգումների արդյունքներն ներկայացնում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին: Վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) ըստ տարեկան հաշվապահական հաշվեկշռի կազմում է եզրակացություն: Առանց այդ եզրակացության Ընկերության հաշվեկշիռը ենթակա չէ հաստատման ընդհանուր ժողովի կողմից: Վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) պարտավոր է պահանջել գումարելու արտահերթ նիստ, եթե գտնում է, որ Ընկերության շահերին էական սպառնալիք է առաջացել:

Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվության հավաստիությունը վերստուգելու համար ընկերությունն իրավունք ունի ամեն տարի ներգրավել Ընկերության կամ նրա մասնակիցների հետ գույքային շահերով չկապված արհեստավարժ վերստուգիչի՝ աուդիտորի (արտաքին աուդիտ):

Ընկերության ընդհանուր ժողովի վերստուգիչ հանձնաժողովի ֆունկցիաները կարող է իրականացնել վարձատրվող վերստուգողը, որը պետք է հաշվետու լինի միայն ընդհանուր ժողովին: Որպես վերստուգող կամ վերստուգիչ հանձնաժողովի անդամ կարող է լինել նաև Ընկերության մասնակից չհանդիսացող անձը: Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամ կամ վերստուգող չի կարող լինել Ընկերության տնօրենը: Վերստուգողը կարող է միաժամանակ սպասարկել մեկից ավելի իրավաբանական անձանց:»

Սույն փոփոխությունը հանդիսանում է «ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ կանոնադրության (նոր խմբագրության մը գրանցված 22.11.2007թ.) բաղկացուցիչ մասը:

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
հուլիսի 4-ի N 601 որոշմամբ

ՆԵՐԴԻՐ 012

իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի

Վկայական 03Ա062367

Անվանումը ,,ՎԱԼԵՏՏԱ,,
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Գտնվելու վայրը (հասցեն)

Այլ տեղեկություններ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ 06.10.2008թ.:

Ներդիրն ուժի մեջ է վկայականի հետ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

.....
(ստորագրություն)

"06" Հոկտեմբերի 8
"....." ..... 200....թ.

Կ. Տ.